1771 առաջի իմ երդմնեցաւ և վկայեաց զոր ինչ 'ի վեր գրեցեալ, և ձեռնադրեաց, և այս թուղթ վկայականի պարտ է ամրափակել և կնքել կընքաւ վկայութիւնս առնողին, և յերեսին գրել սա է վկայութիւն Մարտիրոսի որդոյ բաղրամի, առ 'ի հաստատութիւն բանին գանգատող Մաղաքիայ որդոյ զաքարիայի որ եմոյծ 'ի ատենի դատաստանին մայրաքաղաքին երևանոյ, և թուղթն այն ամուր կնքօք ընծայել առ 'ի ատենն դատաստանի, զի ոչ ոք յառաջագոյն իմասցէ բանն վկայութեան վկային, մինչև 'ի ժամանակն վրճռահատութեան բացցի առաջի ատենի դատաւորաց և այլն։

ԳԼՈՒԽ ՄԷԳ.

Որում տան և կամ փողոցի ով ոք յանկարծ մեռանիցէ ով ոք որ մերձ 'ի նմայ եթէ ընտանի և եթէ օտարական գտեալ անդ 'ի ժամանակի մահուան առն յայնմիկ, պարտ է ճնալ անդ անշարժ և ազդ առնել տունն դատաստանի դատաւորի քաղաքին, և 'ի դատաստանէ պարտ են առաքել մի 'ի դատաւորաց և մի բժիշկ զի երթիցեն որոնեսցեն պատճառն մահուան և ընդունեսցեն վկայութիւն 'ի արանց մերձ դիոյն ննջեցելոյն, այս վկայութիւնս կարի հռչակաւոր լինիլ, և ապա տացեն հրաման դին թաղելոյ։